

մայեց անձնատուր եղողներուն Արածա-
նույ վրայ կամուրջ մը ձգել, որ բանակի
մօտէն կ'անցնէր, և ապա թողուց որ ա-
նոնք բոլորովին ելնեն Հայաստանէն (62) :
Լեզէնաց այս « յաղթանակներուն » համար
Հոովմ մեծադորդ հանդէսներ¹ կատա-
րուեցան :

Կորբուղոն, որ Պետտի վիճակն իմա-
նալով անոր օգնութեան կ'երթար, Եփրա-
տայ մօտերը (Մալաթիոյ քով) հանդիպե-
ցաւ ջախջախուած բանակի բեկորներուն.
չհամարձակեցաւ ի Հայս մտնել, պատճա-
ռելով թէ Պետտոս երդում տուած էր Վա-
ղարշի, որ ոչ մէկ Հոովմայեցի Հայա-
ստան պիտի կոխէր, մինչեւ որ դարձեալ
Պարթեւ պատգամաւորներ Հոովմ երթային
և դառնային : Պատգամաւորը դարձան ըն-
ծաներով, բայց առանց թագ բերելու Տըւ-
ղատայ համար . վասն զի Ներոն կ'ըսէր
թէ Պարթեւաց ըրածը սոսկ հեզնութիւն
մէ. ինչ որ զէնքով առած են արդէն² նոյնը
խօսքով կը խնդրեն : Պատերազմը նորէն
հրատարակուեցաւ. Կորբուղոն սպարապետ
պիտի ըլլար. նա շրջակայ բոլոր թագա-
ւորաց և կուսակալաց զօրքերը, Լիւբիկոյ
և Եգիպտոսի օգնական զնդերը, հինգերորդ
և չորեքտասաներորդ լեզէնները և այլ
ամբաւ բազմութիւն ժողովեց Մենիտինէ
(Մալաթիա) . բայց ասոնցմէ աւելի ինքն
կը վստահէր վեցերորդ և երրորդ Գաղ-
լիական Լեգէոններուն վրայ, զորս անձամբ
Ասորիքէն բերած էր և էին « ամբողջա-
կան, և յաճախակի ու յաղթող պատե-
րազմներու մէջ³ փորձ⁴ » : Այս երբորդ
Գաղղիական Լեգէոնին մէջ Ալդուստական
տեղակալ (Legatus Augusti) էր Արե-
դիոս Փուշլիոս⁵ :

Երկու կողմանց պատրաստութիւնը մեծ
էին. բայց Կորբուղոն Վաղարշայ « ծած-
կաբար խորհուրդ կու տար իւր եղբայրը
(զՏրդատ) Հոովմ զրկել, և կրցաւ զինքը
այդ բանիս մէջ համոզել⁶ » : Խաղաղու-
թիւնը հաստատուեցաւ 63ին : Տրդատ յանձն
առած էր Հոովմ երթալ. նա նախ հոով-
մէական բանակը եկաւ, որ Մենիտինէն
ելնելով Եփրատը անցած էր, և անհաւա-
նական չէ կարծել թէ մեր արձանագրին
գտնուած տեղերուն մօտ դադար առած ըլ-
լայ, ուսկից կ'անցնէր Լուկուլլոսի հորդած
ճանապարհը : Արդ, Տրդատ հոս նախ այդ
ճամբարին մէջ Ներոնի պատկերին առջեւ
դրաւ իւր թագը, ըսելով թէ զայն ի Հոովմ
կայսեր ձեռքէն կրկին պիտի ընդունէր :
Եւ յիշաւի նա Հոովմ գնաց և ամենամեծ
հանդիսաւորութեամբ թագաւոր Հայա-
ստանի պսակուեցաւ Ներոնէն (66), որ և
ամբաւ դրամ և արհեստաւորներ տուաւ
իրեն, կործանեալ Արտաշատը կանգնելու
համար : Տրդատ Ա. (53, 66—75...) եղաւ
ի Հայս Արշակունի հարստութեան հիմնողն :
Ահա այսպիսի պարագաներու մէջ գրուե-
ցաւ արձանագիրս, որ անշուշտ Երբորդ
Գաղղիական Լեգէոնին ցոյց տուած մաս-
նաւոր քաջութեան մը համար կանգնուած
ըլլալու է : Հայկական հողի վրայ այս
երկրորդ⁷ արձանագիրն է որ Հոովմէական
Լեգէոնները մեզի ձգած են :

Հ. Յ. ԱՍՏՈՒԲԵԱՆ.

Մ Ա Ն Ո Ի Ե Ա Կ Ի Ն Ի Ղ Զ Ը

Ծաղիկներու երբ պահապան հրեշտակ
Ըստեղծեց մանուշակ,
« Ո՛վ իմ հեղիկ իշխանութեանս հրապատակ,
— Ըսաւ անոր հրեշտակ, —
Գիտ ի՞նչ շնորհ կըրնամ վրադ աւելցնել » .
— Քիչ մը խոտ⁸ ծախկընելու :

Թրգմ. Հ. Ղ. ԲԱԻԿԵԱՆ

1. Տակեա. ԺԵ. 18.

2. Տակեա. ԺԵ. 6. 26.

3. Տակեա. պատմ. Ա. 79.

4. Դիոն. ԿԲ. 23.

5. Առաջինք որ Վաղարշպատու մէջ գտնուեցաւ,
Կոմդոսի ժամանակէն, արդէն անցեալ տարի հրատա-
րակած և թարգմանած ենք ի « Բազմավէյ »-ի, 1906,
Յուլիս :

